ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

**«30» ապրիլի 2026թ.** **N** 20/356

# ՈՐՈՇՈՒՄ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի, նույն հոդվածի 2-րդ մասի, ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի և 42-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակից «Երեմյան Հայրապետ» Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմանները չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ՀՀ ԱԱԾ-ՏԱԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/9-ՀՊՄ2 | 9 | տեսագրող սարքեր | 266,000.00 | «Երեմյան Հայրապետ» Ա/Ձ | 20147771 | ք. Երևան, Արաբկիր, Մամիկոնյանց փ. 56/3 | 14.04.2026թ. | ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն | «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ, նույն հոդվածի 2-րդ մաս, ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ | «Երեմյան Հայրապետ» Ա/Ձ-ի կողմից ներկայացրած հայտում գնահատող հանձնաժողովը 2026թ. ապրիլի 10-ին արձանագրել էր, որ «Երեմյան Հայրապետ» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը չեն համապատասխանու |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 24 | անվտանգության տեսախցիկներ | 2,040,000.00 | | | | | | | և ընթացակարգի իրավերով սահմանված վավերապայմաններին: Դրանով պայմանավորված Գնահատող հանձնաժողովը 2026 թվականի ապրիլի 10-ին որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն սահմանված ժամկետում Մասնակցի կողմից շտկում չի կատարվել և դրանով պայմանավորված «Երեմյան Հայրապետ» Ա/Ձ-ն թիվ ՀՀ ԱԱԾ-ՏԱԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/9-ՀՊՄ2 գնման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում, որն էլ հիմք է հանդիսացել մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշում կայացնելու համար: |
| | 26 | թվային տեսաձայնագրիչներ | 2,480,000.00 | | | | | | | |

Ա. Հակոբյան